ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2013 թվականին Հայաստանի Հանրապետությունում գործել են թվով 97 հեռուստաընկերություն, որից 44-ը՝ վերգետնյա եթերային (այսուհետ՝ եթերային), 53-ը՝ կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող՝թվով 20 ռադիոընկերություն (Հավելված 1):

Եթերային 44 հեռուստաընկերություններից 8-ը հանրապետական սփռման են, որից 1-ն իրականացնում է վերահեռարձակում, 10-ը մայրաքաղաքային սփռման են, ներառյալ 3 վերահեռարձակում իրականացնող հեռուստաընկերություն, 26-ը տարածքային սփռման են (նշված հեռուստաընկերություններին հեռարձակման նպատակով հատկացված կապուղիների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 2-ում):

Կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող հեռուստաընկերություններից 6-ը գործում են Երևան քաղաքում և մեկ կամ մի քանի մարզերում, 16-ը՝ Երևան քաղաքում, 31-ը՝ մեկ մարզի տարածքում:

Ռադիոընկերություններից 3-ը գործում են Երևան քաղաքում և միաժամանակ մեկ կամ մի քանի մարզերում, 14-ը՝ Երևան քաղաքում, 3-ը՝ մեկ մարզի տարածքում (վերոնշյալ ռադիոընկերություններին հեռարձակման նպատակով հատկացված կապուղիների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 3-ում):

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), հաշվի առնելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները և լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ թվով 15 ռադիոընկերությունների հայտերը, 2013թ.-ի հուլիսի 17-ի թիվ 46-Ա որոշմամբ երկարաձգել է բոլոր լիցենզավորված ռադիոընկերությունների ռադիոհաղորդումների հեռարձակման լիցենզիաների գործողության ժամկետները մինչև 2016 թվականի հուլիսի 20-ը:

Մեկ այլ որոշմամբ (Հանձնաժողովի 12.07.2013թ.-ի թիվ 44-Ա որոշում) Հանձնաժողովը բավարարել է «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ընկերության դիմումը՝

նախկինում հատկացված 100.6ՄՀց հաճախությունը 100.7 ՄՀց հաճախությամբ փոխարինելու վերաբերյալ:

2013թ.-ին հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակման լիցենզավորման համար ներկայացված 5 դիմումներից 1-ը մերժվել է՝ ներկայացված գործարար ծրագրի իրատեսական և հիմնավորված չլինելու պատճառով (Հանձնաժողովի 2013թ.-ի հուլիսի17-ի թիվ 47-Ա որոշում): Արդյունքում տրամադրվել է թվով 4 կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա, որից 2-ը հանրապետական սփռման, իսկ 2-ը՝ մարզային (Հավելված 4):

Լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին դիմումների հիման վրա ուժը կորցրած է ճանաչվել հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման թվով 3 լիցենզիա (Հավելված 5):

Նույն ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են ավելի քան 300 հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթեր (պայմանագրեր, համաձայնագրեր), որի արդյունքում թվով 45 կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող ընկերությունների տրվել է ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն (Հավելված 6):

Հանձնաժողովի կարգավորման ոլորտում գտնվող ընկերությունները հաշվետու ժամանակահատվածում ապահովել են ՀՀ պետական բյուջեի զգալի մուտքեր՝ հեռուստառադիոծրագրերի հեռարձակման համար տարեկան պետական տուրքի, դրա չվճարված գումարի նկատմամբ հաշվարկված տույժի, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, “կրկնօրինակ” տրամադրելու համար վճարների հաշվին: 2013 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե փոխանցված գումարը կազմել է 195614.96 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝ 191980.48 հազար դրամ պետական տուրք, 3634.48 հազար դրամ տույժ (Հավելված 7):

2013թ.-ի ընթացքում Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթն իրականացնելու նպատակով կատարել է հանրապետական և մայրաքաղաքային սփռում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ծրագրերի 2 534 և տարածքային սփռում իրականացնող հեռուստառադիոընկերությունների 1 886 օրերի ուղղակի դիտարկումներ:

Հանձնաժողովը ստացել և ուսումնասիրել է հեռուստառադիոընկերությունների հաշվառման մատյանների տվյալները, վարել է դրանց տեղեկատվական բազան, իրականացրել է իր ուղղակի դիտարկումների և ընկերությունների կողմից տրամադրվող տեղեկատվության համադրում, ինչպես նաև հեռուստառադիոծրագրերի հեռարձակման օրինականությունը հավաստող փաստաթղթերի ուսումնասիրություն:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենսդրության պահանջների խախտումներ չի արձանագրել:

Հիմք ընդունելով Հանձնաժողովի 27.12.2012թ-ի թիվ 38-Ա որոշմամբ հաստատված «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող թեկնածուների համար հավասար պայմաններ ապահովելու գնահատման մեթոդաբանությունը» և Հանձնաժողովի 11.03.2013թ-ի թիվ 4-Ա որոշմամբ հաստատված «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմաններ ապահովելու գնահատման մեթոդաբանությունը» հաշվետու ժամանակաշրջանում Հանձնաժողովը իրականացրել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող եթերային հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների ծրագրերի՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխանության վերահսկողություն:

Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում (21.01.13-16.02.13թթ.), անմիջական դիտարկման է ենթարկվել 44 հեռուստաընկերությունների և 20 ռադիոընկերությունների հեռուստառադիոծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների)

ավելի քան 11 689 տևողությամբ եթերաժամ, որից 9 097 ժամը՝ հեռուստածրագրերի մշտադիտարկում (408 ժամը՝ մարզեր կատարած գործուղումների արդյունքում է դիտարկվել), իսկ 2592 ժամը՝ ռադիոծրագրերի մշտադիտարկում: Հանձնաժողովն ուղղակի մշտադիտարկումն (այդ թվում՝ գործուղումների ընթացքում) իրականացրել է հեռուստառադիոընկերությունների վերահսկման պատահական ընտրանքի և հավասարաչափ բաշխման սկզբունքով:

Եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերություններն ու ռադիոընկերությունները 28.01.2013թ., 07.02.2013թ. և 20.02.2013թ. Հանձնաժողով են ներկայացրել իրենց կողմից հեռարձակված ծրագրերի մասին տեղեկատվություն:

Ստացված տեղեկությունները համադրվել են Հանձնաժողովի անմիջական դիտարկման արդյունքների հետ, համակարգվել և ամփոփվել են Հանձնաժողովի տեղեկանքներում, որոնք, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ 30.01.2013թ., 09.02.2013թ. և 22.02.2013թ. հրապարակվել են Հանձնաժողովի կայքէջում, ինչպես նաև նշված ժամկետներում ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում (21.01.13-16.02.13թթ.), ինչպես նաև քվեարկության օրը մինչև ժամը 20^{00}-ն և դրան նախորդող օրը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտումներ չեն արձանագրվել: Հայաստանի Հանրապետության Նախագահի թեկնածուներին և (կամ) նրանց ներկայացուցիչներին վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակի սակագնի սահմանման և նախընտրական քարոզչության ժամանակահատվածում սակագնի փոփոխության, եթերաժամանակի ոչ խտրական տրամադրման սկզբունքի պահանջների խախտումներ նույնպես չեն արձանագրվել:

Ուղղակի մշտադիտարկման նշված ծավալների իրականացման նպատակով Հանձնաժողովը հրավիրել և իր աշխատանքներում ներգրավել է մասնագիտական լրացուցիչ ռեսուրսներ: ԼՂ Հանրապետության Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովից քարոզարշավի

ողջ ընթացքում Հանձնաժողով են գործուղվել որակավորված աշխատակիցներ՝ 54 օր/մարդ ընդհանուր տևողությամբ։

Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում (07.04.13-03.05.13թթ.) Հանձնաժողովը անմիջական դիտարկման է ենթարկել Երևան քաղաքի տարածքում գործող թվով 18 եթերային հեռուստաընկերությունների և 17 ռադիոընկերությունների ծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) ավելի քան 7 533 տևողությամբ եթերաժամ, որից 4 941 ժամը՝ հեռուստածրագրերի մշտադիտարկում, իսկ 2 592 ժամը՝ ռադիոծրագրերի մշտադիտարկում: Հանձնաժողովն ուղղակի մշտադիտարկումն իրականացրել է հեռուստառադիոընկերությունների վերահսկման պատահական ընտրանքի և հավասարաչափ բաշխման սկզբունքով:

Եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերություններն ու ռադիոընկերությունները 14.04.2013թ., 25.04.2013թ. և 04.05.2013թ. Հանձնաժողով են ներկայացրել իրենց կողմից հեռարձակված ծրագրերի մասին տեղեկատվություն: Ստացված տեղեկությունները համադրվել են Հանձնաժողովի անմիջական դիտարկման արդյունքների հետ, համակարգվել և ամփոփվել են Հանձնաժողովի տեղեկանքներում, որոնք, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ 16.04.2013թ., 26.04.2013թ. և 08.05.2013թ., հրապարակվել են Հանձնաժողովի կայքէջում, ինչպես նաև նշված ժամկետներում ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում (07.04.13-03.05.13թթ.), ինչպես նաև քվեարկության օրը մինչև ժամը 20^{00}-ն և դրան նախորդող օրը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտումներ չեն արձանագրվել: Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակի սակագնի սահմանման և նախընտրական քարոզչության ժամանակահատվածում սակագնի փոփոխության, եթերաժամանակի ոչ խտրական տրամադրման սկզբունքի պահանջների խախտումներ նույնպես չեն արձանագրվել:

2012 թվականին Հանձնաժողովը ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված պահանջները խախտելու համար 11.05.2012թ-ի թիվ 17–Ա որոշմամբ «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ–ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության («Կենտրոն» հեռուստաընկերություն) նկատմամբ կիրառել է վարչական տույժ՝ տուգանելով նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով: 2012թ-ի մայիսի 31-ին ՀՀ վարչական դատարանը վարույթ է ընդունել «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ–ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության հայցադիմումն ընդդեմ Հանձնաժողովի՝ «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ–ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության նկատմամբ տուգանք կիրառելու մասին Հանձնաժողովի 11.05.2012թ. թիվ 17-Ա որոշումն ամբողջությամբ անվավեր ճանաչելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի 20.12.2012թ-ի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը 20.02.2013թ-ին վարույթ է ընդունել «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ–ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության կողմից ՀՀ վարչական դատարանի 20.12.2012թ-ի վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքը: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 30.05.2013թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է և ՀՀ վարչական դատարանի 20.12.2012թ. վճիռը թողնվել է անփոփոխ: ՀՀ վճռաբեկ դատարանը 24.07.2013թ-ին կայացրել է որոշում՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 30.05.2013թ-ի որոշման դեմ «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ–ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության կողմից բերված վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին:

2011թ-ի մայիսի 18-ին ՀՀ վարչական դատարանը վարույթ է ընդունել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մի խումբ ուսանողների հայցադիմումն ընդդեմ Հանձնաժողովի՝ վերջինիս անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և Հանձնաժողովին «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ-ի նկատմամբ անբարեխիղճ գովազդ հեռարձակելու համար գրավոր նախազգուշացում կիրառելուն և անբարեխիղճ գովազդի հեռարձակումն արգելելուն պարտավորեցնելու պահանջների մասին: ՀՀ վարչական դատարանի 15.02.2012թ-ի վճռով հայցը բավարարվել է ամբողջությամբ: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը 11.03.2013թ-ին կայացրել է որոշում՝ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու, դատավարական իրավունքը վերականգնելու և վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 11.07.2013թ-ի որոշմամբ մերժվել է Հանձնաժողովի կողմից

բերված վերաքննիչ բողոքը և ՀՀ վարչական դատարանի 15.02.2012թ-ի վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանի 28.08.2013թ-ի որոշմամբ վերադարձվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 11.07.2013թ-ի որոշման դեմ Հանձնաժողովի կողմից բերված վճռաբեկ բողոքը:

Հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ վարչական դատարանի 15.02.2012թ-ի վճիռը, 23.12.2013թ-ին ընդունել է թիվ 83-Ա որոշումը՝ ««ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ-ի նկատմամբ անբարեխիղճ գովազդ հեռարձակելու համար վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում կիրառելու մասին»:

2013 թվականին Ազգային հանձնաժողովը մասնակցել է Կարգավորող մարմինների եվրոպական պլատվորմի (EPRA) 37-րդ (գարնանային) և 38-րդ (աշնանային) նստաշրջաններին, Սևծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀ) հեռուստառադիոհեռարձակման ոլորտը կարգավորող մարմինների ֆորումի (BRAF) 4-րդ տարեկան հանդիպմանը, ինչպես նաև Հեռահաղորդակցության միջազգային ինստիտուտի (IIC) կողմից կազմակերպված Կարգավորող մարմինների միջազգային ֆորումին և Հեռահաղորդակցության ու մեդիա ֆորումին: Ազգային Հանձնաժողովը մասնակցել է նաև Զանգվածային լրատվության միջոցների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակի կողմից կազմակերպված զանգվածային լրատվության միջոցների հարցերին նվիրված հարավ-կովկասյան 10-րդ համաժողովին:

Ազգային հանձնաժողովը համագործակցել է հայաստանյան հասարակական և միջազգային մի շարք կազմակերպությունների, օտարերկրյա պետություններում հեռուստատեսության և ռադիո ոլորտը կարգավորող մարմինների հետ, ինչպես նաև ՀՀ-ում գործող դիվանագիտական ներկայացուցիչների հետ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի հետ համագործակցության շրջանակներում, Ազգային հանձնաժողովը աշխատանքային այցով մեկնել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Այս հանդիպմանը մասնակցել են նաեւ հայաստանյան մի շարք հեռուստաընկերությունների ներկայացուցիչներ: Հանդիպման ընթացքում քննարկվել է տեղեկատվության ոլորտում համագործակցությանը վերաբերող հարցերի լայն շրջանակ: Տեղի է ունեցել ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի

և ԷՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի համատեղ նիստը, որի ընթացքում քննարկվել և ստորագրվել է նշված երկու կառույցների միջև 2014 թվականի համատեղ աշխատանքային ծրագիրը:

Ազգային հանձնաժողովը մասնակցել է նաև Հայաստանի Հանրապետության ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեին ներկայացվելիք 5-րդ և 6-րդ համատեղ զեկույցների քննարկմանը:

Ազգային հանձնաժողովն իրականացրել է իր գործունեության հետ առնչվող հարցերի լուսաբանումը հասարակայնության և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների համար, ինչպես նաև նորությունների մասին տեղեկատվության տեղադրումը Ազգային հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: 2013թ. ընթացքում Հանձնաժողովը գումարել է 34 նիստ, որում ընդունվել է 83 անհատական որոշում:

Հանձնաժողով մուտքագրվել է 731 գրություն, ՀՀ քաղաքացիներից և կազմակերպություններից՝ 13 դիմում-բողոք (հեռուստաընկերությունների հաղորդումների անորակ լինելու, լեզվի անարատության, անբարեխիղճ գովազդ հեռարձակելու մասին և այլն), որոնց պատասխանվել է համաձայն գործող օրենսդրական ակտերին:

Հանձնաժողովն իր դիրքորոշումը հայտնել է ՀՀ օրենքների, միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի 26 նախագծերին: Հանձնաժողովը 2013 թվականի ընթացքում գործուն մասնակցություն է ունեցել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և իր գործունեության հետ կապված իրավական ակտերի նախագծերի մշակման և քննարկման աշխատանքներին՝ ներկայացնելով իր առարկությունները և առաջարկությունները:

2013 թվականի ընթացքում Հանձնաժողովի աշխատակազմը անցկացրել է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համար 2 մրցույթ: 7 քաղաքացիական ծառայողներ ատեստավորվել են և 10 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են:

Հավելված 1

ԵԹԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

հ/հ	Ընկերության անվանումը, հեռուստաձրագրի անվանումը	Սփռման տարածքը	Լիցենզիայի համարը գործողության ժամկետը
	Հայաստանի Հանրապետություն		
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «Հ1 ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ՀԾ	հանրապետական	-
2	«ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «ՇՈՂԱԿԱԹ» ՀԾ	հանրապետական	-
3	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ «ԿԵՆՏՐՈՆ» ՀԾ	հանրապետական	N 151 20.01.2011թ. 20.01.2021թ.
4	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ «Հ2» ՀԾ	հանրապետական	N 152 20.01.2011թ. 20.01.2021թ.
5	«ՇԱՆԹ» ՍՊԸ «ՇԱՆԹ» ՀԾ	հանրապետական	N 157 20.01.2011թ. 20.01.2021թ.
6	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ «ԱՐՄԵՆԻԱ» ՀԾ	հանրապետական	N 163 20.01.2011թ. 20.01.2021թ.
7	«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ «ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» ՀԾ	հանրապետական	N 164 20.01.2011թ. 20.01.2021թ.
8	«ԱՆՍՎԵՐ» ՍՊԸ «ԷՌ ՏԷ ԷՌ ՊԼԱՆԵՏԱ» (РТР планета) ՀԾ	հանրապետական	N 171 28.01.2011թ. 20.01.2021թ.
	ք. Երևան		
1	«ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի մասնաճյուղ «ՄԻՐ» (Мир) ՀԾ	մայրաքաղաքային	–
2	«ԱՐ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «ԱՐ» ՀԾ	մայրաքաղաքային	N 148 20.01.2011թ. 20.01.2021թ.

3	«ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲԸ «ԱՐՄՆՅՈՒԶ» ՀԾ	մայրաքաղաքային	N 153 20.01.2011թ. 20.01.2021թ.
4	«ԵՐԵՎԱՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «ԵՐԵՎԱՆ» ՀԾ	մայրաքաղաքին	N 156 20.01.2011թ. 20.01.2021թ.
5	«ՇԱՐԿ» ՍՊԸ «ԼԱՅՄ» ՀԾ	մայրաքաղաքային	N 160 20.01.2011թ. 20.01.2021թ.
6	«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «ԴԱՐ-21» ՀԾ	մայրաքաղաքային	N 161 20.01.2011թ. 20.01.2021թ.
7	«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ՍՊԸ «ՍԻ ԷՆ ԷՆ» (CNN) ՀԾ	մայրաքաղաքային	N 162 20.01.2011թ. 20.01.2021թ.
8	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ «Ա-ԹԻՎԻ» ՀԾ	մայրաքաղաքային	N 166 20.01.2011թ. 20.01.2021թ.
9	«ԿԱՅՄ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «ՊԵՐՎԻՅ ԿԱՆԱԼ» (Первый канал) ՀԾ	մայրաքաղաքային	N 170 28.01.2011թ. 20.01.2021թ.
10	«ՊԱՐԱԴԻԶ» ՍՊԸ «ԿՈՒԼՏՈՒՐԱ» (Культура) ՀԾ	մայրաքաղաքային	N 172 28.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ Արագածոտնի մարզ			
1	«ԵՐԵՎԱՆ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	ՀՀ Արագածոտնի մարզ	N 167 20.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ Արարատի մարզ			
1	«ՏԵԼԵԼԵՔՍ» ՍՊԸ «ԱՐԱՐԱՏ» ՀԾ	ՀՀ Արարատի մարզ	N 168 20.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ Արմավիրի մարզ			
1	«ՆՈՐ ԴԱՐ, ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄՅԱԿ» ՍՊԸ «Ա» Այբ» ՀԾ	ՀՀ Արմավիրի մարզ	N 158 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ԷՋՄԻԱԾԻՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱԿ «ԱՎԵՏԻՍ» ՀԾ	ք. Էջմիածին	N 43 12.04.2002 թ. 01.01.2015 թ.
3	«ԹԵՎ» ՍՊԸ «ՆՈՅ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԾ	ք. Արմավիր	N 47 18.04.2002 թ.

			01.01.2015 թ.
4	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «ԱԼՏ» ՀԾ	ք. Արմավիր	N 49 18.04.2002 թ. 01.01.2015 թ.
ՀՀ Գեղարքունիքի մարզ			
1	«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ «ԳԵՂԱՄԱ» ՀԾ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	N 149 20.01.2011թ. 20.01.2021թ.
ՀՀ Լոռու մարզ			
1	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ «ՖՈՐՏՈՒՆԱ» ՀԾ	ՀՀ Լոռու մարզ	N 150 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ԱՐՏԳԱՐ» ՍՊԸ «9-ՐԴ ԱԼԻՔ» ՀԾ	ք. Վանաձոր	N 48 18.04.2002 թ. 01.01.2015 թ.
3	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ «ՄԻԳ» ՀԾ	ք. Վանաձոր	N 58 03.07.2002 թ. 01.01.2015 թ.
4	«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՍՊԸ «ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՀԾ	ք. Ալավերդի	N 79 25.10.2003 թ. 01.01.2015 թ.
5	«ԼՈՌԻ ԹԻ-ՎԻ» ՍՊԸ «ԼՈՌԻ» ՀԾ	ք. Վանաձոր	N 83 01.11.2003 թ. 01.01.2015 թ.
6	«ԱՆՆԱ ԵՎ ԿԱՐԵՆ» ՍՊԸ «ՍԼԱՎ ՄԵԴԻԱ» ՀԾ	ք. Սպիտակ	N 97 22.02.2005 թ. 01.01.2015 թ.
ՀՀ Կոտայքի մարզ			
1	«ԱԲՈՎՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «ԱԲՈՎՅԱՆ ԹԻ-ՎԻ» ՀԾ	ՀՀ Կոտայքի մարզ	N 154 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ՆԱՐԵԿ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «ՆԱՐԵԿ» ՀԾ	ք. Աբովյան	N 62 16.12.2002 թ. 01.01.2015 թ.
3	«ԼՈՒՍԱԼԻՔ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «ԼՈՒՍԱԼԻՔ» ՀԾ	ք. Չարենցավան	N 66 04.07.2003 թ. 01.01.2015 թ.
4	«ՍԻՐԱԿ» ՍՊԸ «ՀՐԱԶԴԱՆ ԹԻ-ՎԻ» ՀԾ	ք. Հրազդան,	N 89 12.01.2004 թ. 01.01.2015 թ.
ՀՀ Շիրակի մարզ			

1	«ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ» ՓԲԸ «Շ 1» ՀԾ	ՀՀ Շիրակի մարզ	_
2	«ՑԱՅԳ» ՍՊԸ «ՑԱՅԳ» ՀԾ	ՀՀ Շիրակի մարզ	N 165 20.01.2011թ. 20.01.2021թ.
3	«ՉԱՊ» ՍՊԸ «ԳԱԼԱ» ՀԾ	ք. Գյումրի	N 98 23.02.2005 թ. 01.01.2015 թ.
ՀՀ Սյունիքի մարզ			
1	«ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ «ՍՈՍԻ» ՀԾ	ՀՀ Սյունիքի մարզ	N 169 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ԼԱՍՏԻ ԽՈՒՏ» ՍՊԸ «ԼԱՍՏ» ՀԾ	ք. Գորիս	N 73 06.10.2003 թ. 01.01.2015 թ.
3	«ՈՐՈՏԱՆՅԱՆ ՂՈՂԱՆՋՆԵՐ» ՍՊԸ «ՍՅՈՒՆԻ» ՀԾ	ք. Սիսիան	N 76 10.10.2003 թ. 01.01.2015 թ.
ՀՀ Վայոց ձորի մարզ			
-	_	_	_
ՀՀ Տավուշի մարզ			
1	«ՏԱՎՈՒՇ-ՏՎ» ՍՊԸ «ՏԱՎՈՒՇ» ՀԾ	ՀՀ Տավուշի մարզ	N 159 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ՔԱՄՈՒՏ» ՍՊԸ «ՔԱՄՈՒՏ» ՀԾ	ք. Նոյեմբերյան	N 81 01.11.2003 թ. 01.01.2015 թ.
3	«ԻՋԵՎԱՆ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ «ԻՋԵՎԱՆ ՍՏՈՒԴԻԱ» ՀԾ	ք. Իջևան	N 85 06.11.2003 թ. 01.01.2015 թ.

ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

h/h	**Ընկերության անվանումը**	**Սփռման տարածքը**	**Լիցենզիայի համարը, գործողության ժամկետը**
Հայաստանի Հանրապետություն			
1	«ՎԻԳԵԴՈ» ՓԲԸ	հանրապետական	N131

			18.12.2007թ. 18.12.2017թ.
2	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	հանրապետական	N144 23.10.2010թ. 23.10.2020թ.
3	«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ	հանրապետական	N186 16.10.2012թ. 16.10.2022թ.
4	«ՔՐՈՍՍ ՀԻԹԵՔ» ՍՊԸ	հանրապետական	N187 06.11.2012թ. 06.11.2022թ.
5	«ԷՍ ՊԵ ԲԵ ԹԻ ՎԻ» ՍՊԸ	հանրապետական	N192 17.08.2013թ. 17.08.2023թ.
6	«ԱՐԱՑ» ՍՊԸ	ք. Երևան, Սյունիքի մարզ	N 188 18.12.2012թ. 18.12.2022թ.
	ք. Երևան		
1	«ՏԵԼԵՊՈՐՏ» ՍՊԸ	ք. Երևան	N 106 13.07.2005թ. 13.07.2015թ.
2	«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան	N 121 05.09.2006թ. 05.09.2016թ.
3	«ԱՐՎԵՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍ» ՍՊԸ	ք. Երևան	N129 16.11.2007թ. 16.11.2017թ.
4	«ԺԱՄԱՐՏԵ» ՍՊԸ	ք. Երևան	N134 02.06.2009թ. 02.06.2019թ.
5	«ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊԸ	ք. Երևան	N137 20.03.2010թ. 20.03.2020թ.
6	«ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան	N140 26.05.2010թ. 26.05.2020թ.
7	«ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան	N141 26.05.2010թ. 26.05.2020թ.

8	«ՆԱՏՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	N142 01.10.2010թ. 01.10.2020թ.
9	«ՆՈՐ ՆՈՐՔ ԿԱԲԵԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Երևան	N143 01.10.2010թ. 01.10.2020թ.
10	«ՄՈՒԼՏԻ ՔԱՍՏ» ՍՊԸ	ք. Երևան	N146 23.12.2010թ. 23.12.2020թ.
11	«ԲԵՏԱ-ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան	N173 16.03.2011թ. 16.03.2021թ.
12	«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	N174 10.06.2011թ. 10.06.2021թ.
13	«ՄԱՐԻՆԿԱ» ՍՊԸ	ք. Երևան	N179 01.09.2011թ. 01.09.2021թ.
14	«ՍԹՐԻՄԶՈՆ» ՍՊԸ	ք. Երևան	N180 20.12.2011թ. 20.12.2021թ.
15	«ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	N184 15.06.2012թ. 15.06.2022թ.
16	«ԷՅ-ԱՓ» ՓԲԸ	ք. Երևան	N 185 16.06.2012 թ. 16.06.2022 թ.
ՀՀ Արագածոտնի մարզ			
1	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	ք. Աշտարակ	N147 23.12.2010թ. 23.12.2020թ.
ՀՀ Արարատի մարզ			
1	«ԱՐՏ-ԹԻՎԻ-ՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ	N183 22.05.2012թ. 22.05.2022թ.
2	«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ	ք. Մասիս, ք. Արտաշատ, ք. Վեդի, ք. Արարատ	N181 31.01.2012թ. 31.01.2022թ.

3	«ԱՐԼՈՔՆԵԹ» ՍՊԸ	ք. Արարատ	N132 04.03.2009թ. 04.03.2019թ.
4	«ԴԻՋԻ ԹՎ» ՍՊԸ	ք. Մասիս	N178 09.08.2011թ. 09.08.2021թ.
ՀՀ Արմավիրի մարզ			
1	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Արմավիրի մարզ	N191 08.08.2013թ. 08.08.2023թ.
2	«ԹԵՎ» ՍՊԸ	ք. Արմավիր, ք. Մեծամոր	N130 20.11.2007թ. 20.11.2017թ.
3	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Արմավիր	N138 23.03.2010թ. 23.03.2020թ.
ՀՀ Գեղարքունիքի մարզ			
1	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	N 189 28.12.2012թ. 28.12.2022թ.
2	«ՍԱՄՈՒ-ՏՎ» ՍՊԸ	ք. Սևան	N126 27.09.2007թ. 27.09.2017թ.
3	«ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ	ք. Ճամբարակ	N133 07.04.2009թ. 07.04.2019թ.
4	«ՔՅԱՎԱՌԻ ՀՈՒՅՍ» ՍՊԸ	ք. Գավառ	N136 22.12.2009թ. 22.12.2019թ.
ՀՀ Լոռու մարզ			
1	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	ք. Վանաձոր	N 109 08.11.2005թ. 08.11.2015թ.
2	«Ց.Ա.Ա.Ա.Է.» ՍՊԸ	ք. Վանաձոր	N 112 04.04.2006թ. 04.04.2016թ.
3	«ՍՊԱՅԴԵՐ ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ	ք. Վանաձոր	N145 23.12.2010թ. 23.12.2020թ.

ՀՀ Կոտայքի մարզ			
1	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	ք. Նոր Հաճըն	N 118 08.07.2006թ. 08.07.2016թ.
2	«ՍԱՄՎԵԼ-ՄԵԼԻՆԵ» ՍՊԸ	ք. Աբովյան	N124 01.08.2007թ. 01.08.2017թ.
3	«ՀԵՌԱՏԵՍ» ՍՊԸ	ք. Հրազդան	N125 02.08.2007թ. 02.08.2017թ.
4	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	ք. Չարենցավան	N128 15.11.2007թ. 15.11.2017թ.
5	«ՄԵԴԱԼՍԱՆ» ՍՊԸ	ք. Բյուրեղավան	N139 01.05.2010թ. 01.05.2020թ.
6	«ՀԱՃԸՆ ԻՍՊ» ՍՊԸ	ք. Նոր Հաճըն	N176 09.07.2011թ. 09.07.2021թ.
7	«ՊԼԱՆԵՏ ՐԱՖՖԻ» ՍՊԸ	ք. Եղվարդ	N177 04.08.2011թ. 04.08.2021թ.
ՀՀ Շիրակի մարզ			
1	«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ	N182 18.05.2012թ. 18.05.2022թ.
2	«ՄՄՏ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Գյումրի	N 113 11.04.2006 թ. 11.04.2016 թ.
3	«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊԸ	ք. Գյումրի	N122 01.08.2007թ. 01.08.2017թ.
4	«ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ք. Գյումրի, ք. Արթիկ	N175 09.07.2011թ. 09.07.2021թ.
ՀՀ Սյունիքի մարզ			
1	«ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Կապան	N 93 09.10.2004թ. 09.10.2014թ.
2	«ԱԳԱՐԱԿ-ՏՎ» ՍՊԸ	ք. Մեղրի, ք. Ագարակ	N 103

			23.03.2005թ. 23.03.2015թ.
3	«ԱՆԳԵՂ-ՏՎ» ՍՊԸ	ք. Սիսիան	N 111 28.12.2005թ. 28.12.2015թ.
4	«ԽՈՅԼՈՒՆՑՆԵՐ» ՍՊԸ	ք. Գորիս	N 119 08.07.2006թ. 08.07.2016թ.
ՀՀ Վայոց ձորի մարզ			
-	-	-	-
ՀՀ Տավուշի մարզ			
1	«ԱՅՐՈՒՄ ԹԻՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Այրում	N127 29.09.2007թ. 29.09.2017թ.

ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

հ/հ	**Ընկերության անվանումը, ռադիոկայանի անվանումը**	**Սփռման տարածքը**	**Լիցենզիայի համարը, գործողության ժամկետը**
Հայաստանի Հանրապետություն			
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ Հանրային ռադիոյի առաջին ծրագիր «ԱՌԱՋԻՆ ԾՐԱԳԻՐ» ռադիոկայան	ք. Երևան, մարզեր	-
ք. Երևան			
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ Հանրային ռադիոյի երկրորդ ծրագիր «ԻՄ ՌԱԴԻՈ» ռադիոկայան	ք. Երևան	-
2	«ՎԷՄ ՍՓԻՈՒՌ» ՍՊԸ «ՎԷՄ» ռադիոկայան	ք. Երևան	-
3	«ՖՄ-102.4» ֆրանսիական ծրագիր	ք. Երևան	-
4	«ԱՐՁԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊԸ «ԱՐՁԱԳԱՆՔ» ռադիոկայան	ք. Երևան	N 42 12.04.2002թ. 20.07.2016թ.
5	«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ «ԱՐՄՌԱԴԻՈ FM 107» ռադիոկայան	ք. Երևան	N 50 22.04.2002թ.

			20.07.2016թ.
6	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ «ԵՐԵՎԱՆ» ռադիոկայան	ք. Երևան	N 51 22.04.2002թ. 20.07.2016թ.
7	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ռադիոկայան	ք. Երևան	N 52 22.04.2002թ. 20.07.2016թ.
8	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ «ՎԱՆ» ռադիոկայան	ք. Երևան	N 55 30.04.2002թ. 20.07.2016թ.
9	«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «ՍԻԹԻ ՖՄ» ռադիոկայան	ք. Երևան	N 56 03.07.2002թ. 20.07.2016թ.
10	«ՖՄ-105.5» ՍՊԸ «ՀԱՅ ՖՄ» ռադիոկայան	ք. Երևան	N 61 16.12.2002թ. 20.07.2016թ.
11	«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ «ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» (Русское радио) ռադիոկայան	ք. Երևան	N 72 09.10.2003թ. 20.07.2016թ.
12	«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ «ԻՄՊՈՒԼՍ» ռադիոկայան	ք. Երևան	N 92 20.07.2004թ. 20.07.2016թ.
13	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ռադիոկայան	ք. Երևան	N 95 19.02.2005թ. 20.07.2016թ.
14	«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ՍՊԸ «ԱՎՏՈՌԱԴԻՈ» ռադիոկայան	ք. Երևան	N 101 26.02.2005թ. 20.07.2016թ.
15	«ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՋԱՆ» ռադիոկայան	ք. Երևան	N 116 06.06.2006թ. 20.07.2016թ.
16	«ՈՒԼԻՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ «ՆՈՐ ՌԱԴԻՈ» ռադիոկայան	ք. Երևան	N 117 06.06.2006թ. 20.07.2016թ.
Մեկից ավելի մարզեր			
1	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ռադիոկայան	մարզեր	N 99 24.02.2005թ. 20.07.2016թ.
2	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ «ԵՐԵՎԱՆ» ռադիոկայան	մարզեր	N 100 26.02.2005թ. 20.07.2016թ.

3	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ «ԵՐԵՎԱՆ» ռադիոկայան	մարզեր	N 108 23.09.2005 թ. 20.07.2016թ.
Մեկ մարզ			
1	«ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ» ՓԲԸ Շիրակի հանրային ռադիո	ՀՀ Շիրակի մարզ	–
2	«ՇԱՆԹ» ՍՊԸ «ՇԱՆԹ» ռադիոկայան	ք. Գյումրի	N 65 04.07.2003թ. 20.07.2016թ.
3	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ «ԻՆՏԵՐԿԱՊ» ռադիոկայան	ք. Վանաձոր	N 87 16.12.2003թ. 20.07.2016թ.
4	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ «ԵՐԵՎԱՆ» ռադիոկայան	ք. Ծաղկահովիտ	N 110 18.11.2005թ. 20.07.2016թ.

Հավելված 2

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԵՌՈՒՍՏԱՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՀՀ-ՈՒՄ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԿԱՊՈՒՂԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	**Սփռման տարածքը**	**Հատկացված կապուղիների քանակը**
1	ք. Երևան	18
2	Արագածոտնի մարզ	48
3	Արարատի մարզ	34
4	Վայոց Ձորի մարզ	138
5	Գեղարքունիքի մարզ	75
6	Լոռու մարզ	159
7	Կոտայքի մարզ	86
8	Տավուշի մարզ	145
9	Արմավիրի մարզ	15
10	Շիրակի մարզ	59
11	Սյունիքի մարզ	194

Հավելված 3

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՌԱԴԻՈՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՀՀ-ՈՒՄ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀԱՃԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	**Սփռման տարածքը**	**Հատկացված հաճախությունների քանակը**
1	ք. Երևան	18
2	Արագածոտնի մարզ	6
3	Արարատի մարզ	4
4	Վայոց Ձորի մարզ	6
5	Գեղարքունիքի մարզ	9
6	Լոռու մարզ	10
7	Կոտայքի մարզ	3
8	Տավուշի մարզ	9
9	Արմավիրի մարզ	2
10	Շիրակի մարզ	8
11	Սյունիքի մարզ	12
12	Հայաստանի Հանրապետություն	3

Հավելված 4

2013Թ.-ԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՑԱՆԿ

h/h	**Ընկերության անվանումը**	**Սփռման տարածքը**	**Որոշման ընդունման ամսաթիվը, համարը**
1	«ԿԱԼԻՊՍՈ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ՀՌԱՀ 02.04.2013թ. թիվ 8-Ա որոշում
2	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Արմավիրի մարզ	ՀՌԱՀ 05.08.2013թ. թիվ 60-Ա որոշում
3	«ԷՍ ՊԵ ԲԵ ԹԻ ՎԻ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ՀՌԱՀ 12.08.2013թ. թիվ 62-Ա որոշում
4	«ՊՐՈԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ՀՌԱՀ 28.10.2013թ. թիվ 75-Ա որոշում

Հավելված 5

2013Թ.-ԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՎԱԾ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՑԱՆԿ

հ/հ	**Ընկերության անվանումը**	**Սփռման տարածքը**	**Որոշման ընդունման ամսաթիվը, համարը**
1	«ԿԱԲԵԼԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ	ՀՀ ք. Երևան	ՀՌԱՀ 08.02.2013թ. թիվ 2-Ա որոշում
2	«ԿԱԼԻՊՍՈ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ՀՌԱՀ 28.10.2013թ. թիվ 76- Ա որոշում
3	«ՊՐՈԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	ՀՌԱՀ 13.12.2013թ. թիվ 81-Ա որոշում

Հավելված 6

2013Թ.-ԻՆ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

h/h	Ընկերության անվանումը	Որոշման ընդունման ամսաթիվը, համարը
1	«ՎԻԳԵԴՈ» ՓԲԸ	ՀՌԱՀ 30.07.2013թ. թիվ 55-Ա որոշում
2	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	ՀՌԱՀ 17.07.2013թ. թիվ 48-Ա որոշում ՀՌԱՀ 26.09.2013թ. թիվ 72-Ա որոշում ՀՌԱՀ 14.11.2013թ. թիվ 77-Ա որոշում
3	«ԱՐԱՑ» ՍՊԸ	ՀՌԱՀ 05.08.2013թ. թիվ 61-Ա որոշում
4	«ՏԵԼԵՊՈՐՏ» ՍՊԸ	ՀՌԱՀ 12.07.2013թ. թիվ 27-Ա որոշում
5	«ԱՐՎԵՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍ» ՍՊԸ	ՀՌԱՀ 28.08.2013թ. թիվ 66-Ա որոշում
6	«ԺԱՄԱՐՏԵ» ՍՊԸ	ՀՌԱՀ 04.07.2013թ. թիվ 22-Ա որոշում
7	«ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊԸ	ՀՌԱՀ 17.07.2013թ. թիվ 51-Ա որոշում
8	«ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊԸ	ՀՌԱՀ 12.07.2013թ. թիվ 32-Ա որոշում
9	«ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊԸ	ՀՌԱՀ 04.07.2013թ. թիվ 17-Ա որոշում
10	«ՆԱՏՆԵՏ» ՍՊԸ	ՀՌԱՀ 04.07.2013թ. թիվ 19-Ա որոշում
11	«ՆՈՐ ՆՈՐՔ ԿԱԲԵԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ՀՌԱՀ 12.07.2013թ. թիվ 40-Ա որոշում
12	«ՄՈՒԼՏԻ ՔԱՍՏ» ՍՊԸ	ՀՌԱՀ 04.07.2013թ. թիվ 18-Ա որոշում
13	«ԲԵՏԱ-ԹԻՎԻ» ՍՊԸ	ՀՌԱՀ 12.07.2013թ. թիվ 26-Ա որոշում
14	«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	ՀՌԱՀ 04.07.2013թ. թիվ 16-Ա որոշում ՀՌԱՀ 18.09.2013թ. թիվ 69-Ա որոշում
15	«ՄԱՐԻՆԿԱ» ՍՊԸ	ՀՌԱՀ 12.08.2013թ. թիվ 63-Ա որոշում
16	«ՍԹՐԻՄԶՈՆ» ՍՊԸ	ՀՌԱՀ 04.07.2013թ. թիվ 21-Ա որոշում
17	«ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ	ՀՌԱՀ 12.07.2013թ. թիվ 37-Ա որոշում
18	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	ՀՌԱՀ 12.07.2013թ. թիվ 28-Ա որոշում
19	«ԱՐՏ-ԹԻՎԻ-ՆԵԹ» ՍՊԸ	ՀՌԱՀ 12.07.2013թ. թիվ 34-Ա որոշում
20	«ԱՐԼՈՔՆԵԹ» ՍՊԸ	ՀՌԱՀ 12.07.2013թ. թիվ 35-Ա որոշում
21	«ԴԻԶԻ ԹՎ» ՍՊԸ	ՀՌԱՀ 30.07.2013թ. թիվ 56-Ա որոշում

22	«ԹԵՎ» ՍՊԸ	ՀՌԱՀ 12.07.2013թ. թիվ 30-Ա որոշում
23	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ՀՌԱՀ 20.08.2013թ. թիվ 64-Ա որոշում
24	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	ՀՌԱՀ 12.07.2013թ. թիվ 38-Ա որոշում
25	«ՍԱՄՈՒ-ՏՎ» ՍՊԸ	ՀՌԱՀ 04.07.2013թ. թիվ 20-Ա որոշում
26	«ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ	ՀՌԱՀ 30.07.2013թ. թիվ 57-Ա որոշում
27	«ՔՅԱՎԱՌԻ ՀՈՒՅՍ» ՍՊԸ	ՀՌԱՀ 12.07.2013թ. թիվ 31-Ա որոշում
28	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	ՀՌԱՀ 17.07.2013թ թիվ 52-Ա որոշում
29	«Ց.Ա.Ա.Ա.Է.» ՍՊԸ	ՀՌԱՀ 04.07.2013թ. թիվ 23-Ա որոշում
30	«ՍՊԱՅԴԵՐ ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ	ՀՌԱՀ 12.07.2013թ. թիվ 33-Ա որոշում
31	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	ՀՌԱՀ 17.07.2013թ. թիվ 50-Ա որոշում
32	«ՍԱՄՎԵԼ-ՄԵԼԻՆԵ» ՍՊԸ	ՀՌԱՀ 30.07.2013թ. թիվ 58-Ա որոշում
33	«ՀԵՌԱՏԵՍ» ՍՊԸ	ՀՌԱՀ 12.07.2013թ. թիվ 39-Ա որոշում
34	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	ՀՌԱՀ 04.07.2013թ. թիվ 24-Ա որոշում
35	«ՄԵԴԱԼՍԱՆ» ՍՊԸ	ՀՌԱՀ 30.07.2013թ. թիվ 54-Ա որոշում
36	«ՀԱՃԸՆ ԻՍՊ» ՍՊԸ	ՀՌԱՀ 18.09.2013թ. թիվ 68-Ա որոշում
37	«ՊԼԱՆԵՏ ՐԱՖՖԻ» ՍՊԸ	ՀՌԱՀ 12.07.2013թ. թիվ 43-Ա որոշում ՀՌԱՀ 30.07.2013թ. թիվ 59-Ա որոշում ՀՌԱՀ 13.12.2013թ. թիվ 80-Ա որոշում
38	«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՌԱՀ 19.03.2013թ. թիվ 5-Ա որոշում ՀՌԱՀ 12.07.2013թ. թիվ 36-Ա որոշում ՀՌԱՀ 14.11.2013թ. թիվ 78-Ա որոշում ՀՌԱՀ 13.12.2013թ. թիվ 79-Ա որոշում
39	«ՄՄՏ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՌԱՀ 12.07.2013թ. թիվ 41-Ա որոշում
40	«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊԸ	ՀՌԱՀ 12.07.2013թ. թիվ 29-Ա որոշում
41	«ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ՀՌԱՀ 04.07.2013թ. թիվ 15-Ա որոշում
42	«ԽՈՒՍՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	ՀՌԱՀ 14.10.2013թ. թիվ 74-Ա որոշում
43	«ԱԳԱՐԱԿ-ՏՎ» ՍՊԸ	ՀՌԱՀ 12.07.2013թ. թիվ 25-Ա որոշում
44	«ԱՆԳԵՂ-ՏՎ» ՍՊԸ	ՀՌԱՀ 17.07.2013թ. թիվ 49-Ա որոշում
45	«ԽՈՅԼՈՒՆՑՆԵՐ» ՍՊԸ	ՀՌԱՀ 12.07.2013թ. թիվ 42-Ա որոշում

Հավելված 7

2013Թ.-ԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ (ՏՈՒՅԺԻ) ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ

հ/հ	Հեռուստառադիոընկերության անվանումը	Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար գանձված պետական տուրք (տույժ) (ՀՀ դրամ)	
		Պետական տուրք	Տույժ
Եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերություններ			
1	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ	1000000	
2	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ	2000000	
3	«ՇԱՆԹ» ՍՊԸ	20000000	
4	«ԱԲՈՎՅԱՆ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	1000000	
5	«ԵՐԵՎԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	10000000	1525800
6	«ՑԱՅԳ» ՍՊԸ	1000000	
7	«ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲԸ	10000000	
8	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊԸ	20000000	
9	«ԴԱՐ-21» ՍՊԸ	10000000	
10	«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ	20000000	
11	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	20254929	
12	«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ	20000000	400000
13	«ՏԱՎՈՒՇ -ՏՎ» ՍՊԸ	1000000	
14	«ԱՐ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	20000000	400000
15	«ՇԱՐԿ» ՍՊԸ	16090025	
16	«ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	2000000	150000
17	«ՔԱՄՈՒՏ» ՍՊԸ	100000	1975
18	«ՉԱՊ» ՍՊԸ	50000	250
19	«ԷՋՄԻԱԾԻՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱԿ	50000	
20	«ԱՐՏԳԱՐ» ՍՊԸ	50000	
21	«ԹԵՎ» ՍՊԸ	50000	
22	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	50000	1000
23	«ԱՆՆԱ ԵՎ ԿԱՐԵՆ» ՍՊԸ	50000	

24	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ	44000	
25	«ԼՈՒՍԱԼԻՔ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	50000	4500
26	«ՏԵԼԵԼԵՔՍ» ՍՊԸ	24000	
27	«ԼԱՍՏԻ ԽՈՒՏ» ՍՊԸ	50000	
28	«ՆՈՐ ԴԱՐ, ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄՅԱԿ» ՍՊԸ	1000000	
29	«ՍԻՐԱԿ» ՍՊԸ	50000	
Կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող հեռուստաընկերություններ			
1	«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ	100000	
2	«ՆԱՏՆԵՏ» ՍՊԸ	400000	4000
3	«ՍԹՐԻՄԶՈՆ» ՍՊԸ	400000	2000
4	«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՍՊԸ		2750
5	«ՄԵԴԱԼՍԱՆ» ՍՊԸ	100000	9500
6	«ԱՐԼՈՔՆԵԹ» ՍՊԸ	100000	
7	«ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊԸ	400000	
8	«ԱԳԱՐԱԿ-ՏՎ» ՍՊԸ	100000	
9	«ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ	100000	
10	«ԲԵՏԱ-ԹԻՎԻ» ՍՊԸ	400000	14000
11	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	100000	
12	«Ց. Ա. Ա. Ա. Է.» ՍՊԸ	100000	
13	«ՄՈՒԼՏԻ ՔԱՍՏ» ՍՊԸ	800000	200000
14	«ԱՆԳԵՂ- ՏՎ» ՍՊԸ	200000	48000
15	«ԱՐՏ-ԹԻՎԻ-ՆԵԹ» ՍՊԸ	100000	
16	«ՄՄՏ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ	100000	5000
17	«ՄԵԳԱԹԻՎԻ» ՍՊԸ	400000	
18	«ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊԸ	400000	
19	«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ	100000	6000
20	«ԺԱՄԱՐՏԵ» ՍՊԸ	400000	
21	«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	400000	
22	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆԱ» ՍՊԸ	510000	
23	«ԹԻՎԻՆԵՏ» ՓԲԸ	400000	
24	«ԽՈՅԼՈՒՆՑՆԵՐ» ՍՊԸ	100000	
25	«ՏԵԼԵՊՈՐՏ» ՍՊԸ	400000	
26	«ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ	100000	1000

27	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	100000	1000
28	«ՀԵՌԱՏԵՍ» ՍՊԸ	100000	
29	«ՍԱՄՎԵԼ-ՄԵԼԻՆԵ» ՍՊԸ	100000	
30	«ՊԼԱՆԵՏ ՐԱՖՖԻ» ՍՊԸ	100000	1000
31	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	100000	
32	«ԴԻՋԻ ԹՎ» ՍՊԸ	100000	
33	«ՀԱՃԸՆ ԻՍՊ» ՍՊԸ	100000	15500
34	«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊԸ	100000	8000
35	«ԷՍ ՊԵ ԲԵ ԹԻ ՎԻ» ՍՊԸ	500000	
36	«ՄԱՐԻՆԿԱ» ՍՊԸ	400000	
37	«ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	100000	2210
38	«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԹԻՎԻ» ՍՊԸ	400000	
39	«ՍԱՄՈՒ-ՏՎ» ՍՊԸ	100000	
40	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	100000	
41	«ՆՈՐ ՆՈՐՔ ԿԱԲԵԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	400000	9000
42	«ԱՅՐՈՒՄ ԹԻՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՐՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	100000	8000
43	«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ	500000	
44	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	100000	
45	«ՊՐՈԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	250000	
46	«ԱՐՎԵՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍ» ՍՊԸ	400000	
47	«ՔՐՈՍՍ ՀԻԹԵՔ» ՍՊԸ	500000	30000
48	«ԹԵՎ» ՍՊԸ	100000	
49	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	100000	
50	«ՎԻԳԵԴՈ» ՓԲԸ	500000	
51	«ՔՅԱՎԱՌԻ ՀՈՒՅՍ» ՍՊԸ	100000	
52	«ԱՐԱՑ» ՍՊԸ	500000	
53	«ՍՊԱՅԴԵՐ ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ	100000	600
54	«ԷՅ-ԱՓ» ՓԲԸ	500000	
Ռադիոընկերություններ			
1	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ	237000	
2	«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ՍՊԸ	103000	
3	«ՈՒԼԻՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ	106000	147000
4	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ	156000	

5	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ	103000	24500
6	«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ	103000	
7	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ	103000	
8	«ԱՐՁԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊԸ	103000	3000
9	«ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊԸ	106000	
10	«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ	103000	
11	«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	103000	500
12	«ՌԱԴԻՈ - ԱԼՖԱ» ՍՊԸ	103000	
13	«ՇԱՆԹ» ՍՊԸ	3000	
14	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ	3000	
15	«ՖՄ-105.5» ՍՊԸ	103000	5000
Լիցենզիայի գործողությունը դադարեցրած հեռուստաընկերություններ			
1	«Է. Վ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ		3895
2	«ԿԱԼԻՊՍՈ» ՍՊԸ	100000	
3	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ		599500
4	«ՊՐՈԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	500000	
Այլ մուտքեր			
1	«ՏԱԳԱ» ՍՊԸ	9524	
2	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	10000	
3	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ	600000	
		191980478	**3634480**
ԸՆԴԱՄԵՆԸ		**195614958**	